

ՀԱՄԱՌԱՌՈՑ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ

Գ. Կ. ՇԻՐՈՍԱՆ

ԽԱՂՈՂԻ ՎԱՋՆ ԱՌԱՊԱՐԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԱՁԲԱԿՏՐՈՆՆԵՐՈՎ ԲԱԶՄԱՑՆԵԼՈՒ ՍՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նաղողի վաղը մեկ-երկու աչքանի կտրոններով բաղմացնելու ձևը հայտնի է վաղուց և պրակտիկայում կիրառվում է հիմնականում քիչ քանակով, եղած արժեքավոր կլոններից չափ արմատակալներ ուսանալու նպատակով: Բազմազման այդ ձևն ավելի կարևոր նշանակություն ունի խաղողի սելեկցիոն աշխատանքներում, հատկապես նոր կլոնների արագ բազմացման համար: Սովորաբար բաղմացման համար վերցված աչքակտրոնները ջերմոցում կամ ֆերմասներում նախապես արմատակալեցնելուց հետո, նույն դարձանը տեղափոխում են տնկարան և այնտեղ մեկ տարի տեղեցնելուց հետո միայն սդտապործում սրտեռ տնկանյութ:

Հայկական ՍՍՌ Ինտուկտաների Ակադեմիայի Այգև-Գինեգործական Ինստիտուտի Անկեկցիայի սեկտորը 1949 թ. պարնան ընկ. Ս. Հ. Պողոսյանի ղեկավարությամբ ձեռնարկեց սելեկցիայի սեկտորի առաջացրած խաղողի նոր կլոնները մեկ աչքանի կտրոններով բաղմացնելու աշխատանքները, նպատակ ունենալով կարճ ժամկետում այդ կտրոններից ստանալ մեծ քանակությամբ վաղեր՝ նրանց հետագա ուսումնասիրության և արտադրությանը հանձնելու համար:

Ննդիրը զրվեց պարզել այն հարցը, թե նաքավոր չ՝ արդյոք աչքակտրոններից աճեցրած բույսերը հենց նույն տարում, առանց նրանց տնկարան տեղափոխելու, ռզատործել որպես տնկանյութ առապարային հողերի պայմաններում:

Այդ նպատակով 17 կլոններից բաղմացման համար վերցրած մեկաչքանի կտրոնները վաղ դարձանը ֆերմոցում մաքուր ավազի մեջ արմատակալեցնելուց հետո ապրիլի 20-ից մինչև մայիսի 1-ը տեղափոխեցին քղորարտ հողով լցված միջակ մեծությամբ (10—15 սմ) կավե ծաղկամանների մեջ, ճեղափոխման ժամանակ մեկաչքանի կտրոններն աչքի էին ընկնում ուժեղ արմատական սխտեմով՝ միջին հազվով 25—30 արմատ յուրաքանչյուր կտրոնի վրա: Բույսերը ծաղկամանների մեջ մեկ ամիս տեղեցնելուց հետո հունիսի սկզբներին, երբ նրանց երկարությունը 20 սմ պակաս չէր, տեղափոխեցին միայնակ էքսպերիմենտալ Բաղան և նախապես պլանտած արված առապարային հողերի պայմաններում 1,5—2,5 մ հեռավորության վրա տնկեցին առաջացրած կլոնների նախնական բաղմացման այգին: Հաջիկ առնելով հողի՝ հումուսով վերին աստիճանի աղքատ լինելը (1⁹/₁₀-ից ոչ ավելի), տնկելուց առաջ յուրաքանչյուր փոսում լցրինք 1—1,5 կգ փտած աղբ, թեթևակիորեն խոտնելով այն հողի հետ Այնուհետև բույսը զոդությամբ հանում էինք ծաղկամանից և իրենց հողով տնկելուց պատրաստված փոսերի մեջ, 15—20 սմ խորությամբ և ջրում, ճնկե-

յու ժամանակ հատուկ ուշադրություն էին դարձնում բույսերի միահավասար բարձրությունումը տնկելու վրա, քանի որ այդ հողամասի հետագա ստացման ձևը կախված էր ընդհանուր դաշտի ռոտովման սխեմայի հետ՝ առունների միջոցով: Հաջվի էր առնվում, որ եթե ջրելու ժամանակ, բույսի ցածի մասի տերևներն անգամ ծածկվին արդժով, ապա վերևի տերևները մնան մաքուր և ասիմիլացիայի պրոցեսը նորմալ ընթանալու:

Այդին տնկելու համար որոշ կյոններից տնկինք նաև մեկ տարեկան արմատակալներ, որոնք տնկել էինք այդ հողամասում 1949 թ. ապրիլ ամսին: Բն միամյա արմատակալներով և թի մեկաչքանի կտրոններով տնկած բույսերին վեղետացիայի ամբողջ շրջանում արվել է ջուր՝ դրանան տնկածներին 21 անգամ, հունիսին տնկածներին 18 անգամ: Փխրացում կատարվել է 6 անգամ, մուլչացում 3 անգամ, սնուցում աղտակալ պարարտանյութով 1 անգամ, բճատում 2 անգամ:

Տնկված բույսերի վրա կատարված դիտողությունները և հաշվառումները ցույց տվեցին, որ մեկաչքանի կտրոններով տնկած բույսերի կաշտնակությունը դերապանցում էր տարեկան մեկ արմատակալներով տնկված բույսերի կաշտնակությունը: Վեղետացիայի վերջում մեկաչքանի կտրոններով աճեցրած բույսերն իրենց միամյա շվերի աճեցողությամբ, հասունությամբ և փայտացման աստիճանով համարյա թի չէին տարբերվում մեկ տարեկան արմատակալներով աճեցրած բույսերից, իսկ որոշ դեպքում գերադանցում էին նրանց (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Մեկաչքանի կտրոններով և մեկ տարեկան արմատակալներով տնկած բույսերի կաշտնակությունը, աճեցողությունը և միամյա շվերի փայտացումը տնկման տարին առաջարկին հոգիեր պայմաններում

№ №	Տնկած կյոնների անունը կամ №-ը	Միջակայական հասակը	Տնկման ժամանակ	Տնկման օրը	Տնկման օրը	Տնկման օրը	Տնկման օրը	Տնկման օրը	Տնկման օրը
1	Ոսկեհատ կոնսորի	մեկ տարեկ. արմատակալ	26,4	29	84	54,6	0,67	72,1	
2	« սերմնարույս »	»	»	31	87	65,5	0,74	80	
3	Կարմիր կախանի »	»	»	12	76	76,4	0,94	85,1	
4	Սպիտակ կրաքարե սերմնարույս	»	27,1	32	78	63,7	0,85	86,4	
5	F-1 իծապտուկ X Վարդապույտի նրբ. թի № 72	»	»	37	86	73,0	0,82	95,2	
6	F-1 իծապտուկ X Սև Սաթենի թի № 27	»	»	25	76	88,7	0,97	80	
	Միջինը 1 տարեկան արմատակալներով			173	31,0	70,3	0,83	83,1	
1	Ոսկե հատ սերմնար.	մեկ աչքանի կտրոններ	7,6	33	93	80,6	1,17	85,8	
2	Արաքսների սերմնար.	»	»	39	93	81,4	0,97	84,9	
3	F-1 իծապտուկ X Սև Սաթենի թի № 52	»	»	33	100	57,7	0,63	75,3	
4	F-1 իծապտուկ X Սև Սաթենի թի № 28—29	»	»	80	96	65,3	0,8	83	
	Միջինը մեկ աչքանի կտրոններով			185	96,7	71,2	0,89	83	

Հետևյալն որ աղյուսակում բերված տվյալները վերաբերում են տարբեր կլիմաների արմատակալներով և մեկ աչքանի կտրոններով բազմացրած բույսերին, ըստ իր և այնպես ցույց են տալիս, որ մեկ աչքանի կտրոններից աճեցրած բույսերը, չնայած անկման ուշ ժամկետին, կալիումով և ֆոսֆորով հերազանցում են, իսկ միամյա շվերի աճեցողությամբ և շվերի փայտացման աստիճանով հետ չեն մնում մեկ տարեկան արմատակալներով աճեցրած բույսերից:

Այլևսի համոզիչ են միևնույն կլիմայի արմատակալներով և մեկ աչքանի կտրոններով բազմացրած բույսերի համեմատական ուսումնասիրության տվյալները տնկման տարում, որոնք բերվում են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

№	Մատերիալի անունը կամ № ը	Տնկման ժամ. կետը	Տնկման ձևը	Տնկման բա- նալիք	Կալիումով բաց %	Միամյա շվերի մեջին տեղ մմ	Միամյա շվերի մեջին հաստ. մմ	Միամյա շվերի փայտաց. %
1	Կլոն № 20 իծապտուկ Սև Սաթենի	28/4 1949	Արմատակալնե- րով աչքակտրոն	23	80,3	70	0,88	84
	» »	12/6	» ներով	38	87	70	0,8	81,4
2	Կլոն № 26/1 F-1 իծապ- տուկ Սև Սաթենի	29/4 14/6	արմատակալն. աչքակտրոն.	71 84	85,0 98,3	61,6 54,2	0,78 0,78	83,4 94,6
3	Կլոն 078 F-1 իծապտուկ Վարդաղույն Երևանի	29/4 14/6	արմատակալն. աչքակտրոն.	47 19	83,1 96,7	67,1 50	0,79 0,62	82 74,4
4	Կլոն № 79 F-1 իծապտուկ Վարդաղույն Երևանի	29/4 14/6	արմատակալն. աչքակտրոն.	85 81	73,3 91,5	67 65,4	0,85 0,78	81,5 81,3
5	Կլոն № 80 F-1 իծապտուկ Վարդաղույն Երևանի	25/4 16/4	արմատակալն. աչքակտրոն.	34 20	76,3 98,3	67 58,9	0,78 0,69	83 80,9
6	Կլոն № 75 F-1 Մոխրի Թափիղենի	27/4 7/6	արմատակալն. աչքակտրոն.	24 102	80 94,0	67,4 60,5	0,81 0,75	81,3 83,3
7	Ոսկեհատ սերմաբ. № 7/16	28/4 12/6	արմատակալն. աչքակտրոն.	12 14	78 93,1	103 54,2	1,1 0,6	82,4 80,2
8	Կարմիր կախանի սերմ. 1/4	30/4 15/6	արմատակալն. աչքակտրոն.	22 45	90,8 99,1	69,3 54,8	0,77 0,6	86,0 81,2
9	Կարմիր կախանի սերմ. 1/8	30/4 15/6	արմատակալն. աչքակտրոն.	22 44	91,2 99,2	70 56,1	0,77 0,66	85,4 83,0

Աղյուսակում բերված տվյալները նույնպես ցույց են տալիս, որ միևնույն կլիմայի մեկ աչքանի կտրոններից աճեցրած բույսերն իրենց աճեցողությամբ և փայտացման աստիճանով հետ չեն մնում մեկ տարեկան արմատակալներից աճեցրած բույսերից, իսկ որոշ դեպքում փայտացման աստիճանով անգամ գերազանցում են նրանց: Այդ Լեռնայի թաղամասում է նրանով, որ մեկ աչքանի կտրոններից աճեցրած բույսերը տնկման ժա-

մանակ, շնորհիվ նրանց կարճ լինելուն, տնկել ենք ավելի երես, քան մեկ տարեկան արմատակալները. դրա հետևանքով արմատական սխալմամբ մոտ լինելով հողի վերին շերտերին, գտնվել է ավելի պակաս խոնավություն պայմաններում, որի հետևանքով միամյա շվերի աճեցողությունը և փայտացումն բնթացել է համապատասխան արմատակալները տնկել ենք վաղ դարնանը և ավելի խորը: Նրանց արմատները գտնվելով հողի ավելի խոր շերտերում, վիզիտացիայի շրջանում համեմատաբար շատ ցուր են օդատաշտերի, որի հետևանքով միամյա շվերի աճեցողությունը և փայտացումը բնթացել է անհամապատասխան:

Այսպիսով, բերված տվյալների հիման վրա կարելի է ասել, որ խաղողի նոր առաջացրած կլոնների բազմացումը մեկ աչքանի կարոններով առապարային հողերի պայմաններում, առանց նրանց անկարանում աճեցնելու, տալիս է միանգամայն բավարար արդյունք: Ծիշտ է, բազմացման այդ ձևն արտադրական լայն ստանդարտներում դժվար է կիրառել, քանի որ կապված է մի շարք մանր աշխատանքների հետ, սակայն սկսելիցիոն աշխատանքներում նաև ունի կարևոր նշանակություն, որովհետև առաջացրած արժեքավոր կլոնների հետագա փորձարկմանը և արտադրության մեջ արագ ներդրմանը հիմնականում խիստ խառնարում է սկզբնաշուկի սահմանափակ լինելը, իսկ մեկ տարի անկարանում աճեցնելը զանդադրելում է աշխատանքը: Հետևապես եթե առապարային հողերի պայմաններում մեկ աչքանի կարոններով բազմացման այս ձևը տալիս է բավարար արդյունք, լավ հողային պայմաններում այն առավել ևս կունենա մեծ նշանակություն նոր արժեքավոր կլոնների արագ բազմացման և տարածման գործում:

Հայկական ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի

Այգե-Գինեգործական Ինստիտուտ

Г. К. Широян

Результаты ускоренного размножения новых клонов винограда одноглазковыми черенками в условиях киров

Р е з ю м е

В 1949 году в Институте Виноградарства и Виноделия АН Арм. ССР была проведена работа по ускоренному размножению выводенных сектором селекции новых ценных клонов винограда. С этой целью рано весной в тепличных условиях были поставлены на укоренение одноглазковые черенки 17 клонов, а с 20/IV по 1/V 1949 года была проведена пересадка укоренившихся черенков в вазоны, которые после 30—35 дней были высажены на постоянное место в условиях киров, минуя выращивание в питомнике.

Для размножения по некоторым клонам имелись и одногодичные саженцы, которые были посажены на том же участке в апреле

месяце. В период вегетации все растения получили одинаковый уход.

Наблюдения показали, что растения одноглазковых черенков, в одинаковых почвенных условиях выращивания, по укореняемости превышали растения одногодичных саженцев, а по росту однолетних побегов почти не уступали им. При определении в конце вегетации степени одревеснения, что является также важным показателем, оказалось, что растения одноглазковых черенков почти ничем не отличались от растений одногодичных саженцев, а в некоторых случаях даже превышали их. Следовательно, если в условиях киров использование одноглазковых черенков в качестве посадочного материала, без их выращивания в питомнике, дало положительные результаты, то в хороших почвенных условиях этот метод может оказать большую помощь селекционным работам по ускоренному размножению вновь выведенных ценных клонов винограда.